ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-21-6/2-1

ք. Երևան «23» հունվար 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Ա. Լոքյանի, ով գործում է «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1 460 160** (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Կ և ՌԿԲ գլխավոր վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900011113033	Հ/Հ 900018005646
[illegible]	ՀՎՀՀ 01035038
[illegible] նախարարի տեղակալ	ռեկտոր
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ա. ԼՈՌՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-6/2-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	ՀՀ ՊՆ քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման դասընթացների շրջանակներում մշակել համապատասխան թեմաներով դասախոսություններ և ըստ ուսումնական պարապմունքների բաշխված ժամաքանակներով անցկացնել պարապմունքներ	
	Ծրագրի անվանումը	**Մեկ փուլի տևողությունը**
1.*	Անձնակազմի կառավարում	24 ժամ
2.*	Իրավագիտություն	24 ժամ
3.*	Միջազգային հարաբերություններ	24 ժամ
4.*	Տնտեսագիտություն	24 ժամ
5.*	Համակարգչային հմտություններ	24 ժամ

Ծանոթություն.

1. Վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 09.01.2019թ. «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշման 50-51-րդ կետերով պահանջվող չափանիշներին:

2. 1-5* կետերը՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2020թ. մայիսի 22-ի N 35 հրամանով հաստատված մասնագիտական ծրագրերի 1-5-րդ հավելվածների (հավելվածները կցվում են):

3. Դասախոսությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին ու պահանջներին.
- ներածություն (արդիականություն, նպատակ, խնդիրներ),
- առնվազն երկու ուսումնական հարց,
- օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ,
- օգտագործված հասկացությունների և տերմինների ճշգրտություն,
- ամփոփում,
- ոլորտում առաջավոր փորձի կիրառում:

4. Կատարողը պետք է դասընթացի մեկնարկից տասն աշխատանքային օր առաջ դասախոսությունների, գործնական պարապմունքների պլանների և թեստային առաջադրանքների փաթեթը էլեկտրոնային տարբերակով ներկայացնի պատվիրատուին՝ ուսումնասիրման նպատակով:

5. Յուրաքանչյուր խմբի (մինչև 20 վերապատրաստվողի համար)՝ լսարանային պայմաններով և համապատասխան տեխնիկական միջոցներով (բազմաֆունկցիոնալ տպիչ սարք (սքաներ, բազմացնող, տպիչ), պրոյեկտոր, անհատական համակարգիչ) ապահովում:

6. Դասընթացի ուսումնական պարապմունքները կազմակերպվում են աշխատանքային օրերին, յուրաքանչյուր փուլը 3-օրյա տևողությամբ, ժամը 9:00-ից 18:00-ն (դասացուցակը՝ աշխատանքային ժամերով և ընդմիջումներով տրամադրվում է պատվիրատուին դասընթացի մեկնարկից առնվազն 5 աշխատանքային օր առաջ):

7. Կատարողը դասընթացի մասնակիցների հաճախումների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը դասընթացների վերջում ներկայացնում է պատվիրատուին:

8. Վերապատրաստման դասընթացի յուրաքանչյուր փուլի ավարտին՝ մասնակիցների կողմից ծրագրի յուրացման մակարդակի ստուգման նպատակով կազմվող

թեստերը պետք է բաղկացած լինեն առնվազն 20 թեստային առաջադրանքից:

9. Թեստային առաջադրանքները պետք է ունենան հետևյալ ձևերը՝

1) ճիշտ պատասխանի ընտրություն, երբ թեստավորման մասնակցին առաջարկվում է հարց՝ ենթադրյալ պատասխաններով, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է, և որոնցից թեստավորման մասնակիցն ընտրում է պատասխանի իր տարբերակը.

2) այլընտրանքային ընտրություն, երբ թեստավորման մասնակիցը հարցին պատասխանում է «այո» կամ «ոչ».

10. Թեստային առաջադրանքները կազմելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պահանջները՝

1) բացառել ոչ միանշանակ և բարդ ձևակերպումները.

2) խնդիրներն ու հարցերը ձևակերպել տրամաբանական կառուցվածքով.

3) ժխտողական կառուցվածք ունեցող առաջադրանքները կազմել հնարավորինս քիչ, ընդ որում՝ ժխտողական «Չի», «Չէ», «Ոչ» մասնիկները նշել ընդգծված.

4) պատասխանների տարբերակներում չկիրառել «Բոլոր վերոգրյալները ճիշտ են (ճիշտ չեն)», «Բոլոր հիմնավորումները ճիշտ են (ճիշտ չեն)», «Թվարկված պատասխանները ճիշտ են (ճիշտ չեն)» և այլ նմանատիպ ձևակերպումներ.

5) պատասխանների տարբերակներում չնշել մասնակի ճիշտ պատասխան.

6) բացառել գործողությունը դադարեցված իրավական ակտերից թեստային առաջադրանքների կիրառումը:

11. Թեստավորման նվազագույն 80 տոկոս շեմը հաղթահարած մասանկիցներին տրամադրել վկայական, որտեղ պետք է նշել առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- քաղծառայողի անունը, հայրանունը և ազգանունը,
- քաղծառայողի զբաղեցրած պաշտոնը,
- դասընթացի կազմակերպման ժամկետը,
- թեստավորումից քաղծառայողի հավաքած միավորները,
- վկայական տվող հաստատության անվանումը և հասցեն:

Հավելված 1
ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի
2020թ. մայիսի 22-ի N 35 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(Անձնակազմի կառավարում)

Հ/հ	Թեմայի անվանումը	Ունկնդիրների աշխատանքի ծավալը (ժամ)		
		ընդամենը	այդ թվում՝	
			դասախոսություն	գործնական պարապմունք
1.	ՄՌ կառավարման մոդելներ	2	2	-
2.	Կազմակերպական կառուցվածք	1	1	-
3.	Պաշտոնների դասակարգում և աշխատավարձ	2	2	-
4.	Մարդկային ռեսուրսների հավաքագրում	2	2	-
5.	Կազմակերպական մշակույթ	2	2	-
6.	Աշխատանքի մոտիվացիա	2	2	-
7.	Աշխատանքի արդյունքների կառավարում	2	2	-
8.	Աշխատողների ուսուցում և զարգացում	1	1	-
9.	Կոնֆլիկտների կառավարում	2	1	1
10.	Թիմային աշխատանքի բարելավում	2	2	-
11.	Անձնային տիպեր և աշխատանք դրանց հետ	2	1	1
12.	Հաղորդակցման հմտություններ	2	1	1
13.	Ներկայացման հմտություններ և աշխատանք լսարանի հետ	1	1	-
14.	Թեստավորում	1	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**24**	**20**	**4**

Հավելված 2
ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի
2020թ. մայիսի 22-ի N 35 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(իրավագիտություն)

Հ/հ	Թեմայի անվանումը	Ունկնդիրների աշխատանքի ծավալը (ժամ)		
		ընդամենը	այդ թվում՝ դասա-խոսություն	գործնական պարապմունք
1.	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը	2	2	-
2.	ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը	2	2	-
3.	ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը	2	2	-
4.	Վարչարարություն և վարչական վարույթի իրականացման արդի հարցերը	2	2	-
5.	Կորպորատիվ և պարտավորական իրավունքի արդի հարցերը	1	1	-
6.	ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները վարչական և քաղաքացիական գործերով	1	1	-
7.	Իրավական ակտերի փորձաքննություն	1	1	-
8.	Իրավական ակտերի փորձաքննության տեսակները	1	1	-
9.	Իրավական ակտերի փորձաքննության ժամանակ ստուգման ենթակա արդի հարցերը	1	1	-
10.	Ծառայողական քննության իրականացման կարգը քաղաքացիական ծառայության ոլորտում	2	2	-
11.	Ծառայողական քննության իրականացման կարգը զինվորական ծառայության ոլորտում	1	1	-
12.	Քաղաքացիների պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայության զորակոչի կազմակերպման իրավական կարգը	2	2	-
13.	Քաղաքացիների զորահավաքային ծառայության կազմակերպման և անցկացման կարգը	2	2	-
14.	Սնանկության իրավական կարգավորման և վարույթի արդի հարցերը	2	2	-
15.	ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծերի մշակման տեխնիկան	1	1	-
16.	Թեստավորում	1	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**24**	**23**	**1**

Հավելված 3
ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի
2020թ. մայիսի 22 ի N 35 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(միջազգային հարաբերություններ)

Հ/հ	Թեմայի անվանումը	Ունկնդիրների աշխատանքի ծավալը (ժամ)		
		ընդամենը	այդ թվում՝ դասա-խոսություն	գործնական պարապմունք
1.	Միջազգային գործունեության և միջազգային կապերի իրականացման ընագավառում ՀՀ պետական մարմինների պարտականությունները և ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ նրանց համագործակցությունը	2	2	-
2.	ՀՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները	3	3	-
3.	ՀՀ պաշտպանական քաղաքականության էությունը (նպատակը, խնդիրները): Միջազգային պաշտպանական (ռազմական) համագործակցության զարգացման հիմնական ուղղությունները	3	3	-
4.	Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և երկկողմ համագործակցության խնդիրները	2	2	-
5.	Հարավային Կովկասի տարածաշրջանի անմիջական հարևանների հետ ՀՀ արտաքին քաղաքականության խնդիրները	2	2	-
6.	**Միջազգային բազմակողմ համագործակցության ուղղությունները.** ՀՀ-ՄԱԿ հարաբերությունները ՀՀ-ԵԱՀԿ հարաբերությունները ՀՀ-ԵԽ հարաբերությունները ՀՀ-ԵՄ հարաբերությունները ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունները ՀՀ-ԵԱՏՄ հարաբերությունները ՀՀ-ԿԽՄԿ հարաբերությունները	3	3	-
7.	**Երկկողմ հարաբերությունները.** ՀՀ-ՌԴ հարաբերությունները ՀՀ-ԱՄՆ հարաբերությունները ՀՀ-ՉԺՀ հարաբերությունները	2	2	-
8.	Արցախյան հակամարտության միջազգային կարգավորումը	2	2	-
9.	Այցերի տարատեսակների նշանակությունը միջպետական հարաբերություններում: Այցերի ընթացքում իրականացվող արարողակարգային միջոցառումները	2	1	1
10.	Միջազգային հարաբերություններում շփումների և գրագրության ձևերի ընդունված կանոնակարգը	2	2	-
11.	Թեստավորում	1	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	24	22	2

Հավելված 4
ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի
2020թ. մայիսի 22-ի N 35 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(տնտեսագիտություն)

Հ/հ	Թեմայի անվանումը	Ունկնդիրների աշխատանքի ծավալը (ժամ)		
		ընդամենը	այդ թվում՝ դասա-խոսություն	գործնական պարապմունք
1.	Բյուջետային համակարգը (օրենսդրությունը, խնդիրները, պարտականությունները և պատասխանատվությունը)	3	3	-
2.	Գանձապետական նդրամարկղային գործառնություններ կատարելու կարգը	2	2	-
3.	Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման.հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը	2	1	1
4.	Կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելը	2	2	-
5.	Հիմնական հաշվապահական գործառույթների գծով հաշիվների թղթակցություններ	2	1	1
6.	Կոմունալ ծախսեր (չափաքանակները, ծախսերի ձևակերպման, հաշվարկման և հաշվառման կարգը)	3	2	1
7.	Զինծառայողների դրամական ապահովությունը և դրանց հավասարեցված վճարումները (տեսակները, հաշվարկման և հաշվառման կարգը): Քաղաքացիական ծառայողների վարձատրությունը	3	3	-
8.	Ծախսային ծրագրերի կազմում	3	2	1
9.	Բյուջետային և ֆինանսական պլանավորում (այդ թվում՝ ծրագրային բյուջետավորում)	3	2	1
10.	Թեստավորում	1	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**24**	**18**	**6**

Հավելված 5
ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի
2020թ. մայիսի 22-ի N 35 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(համակարգչային հմտություններ)

Հ/հ	Թեմայի անվանումը	Ունկնդիրների աշխատանքի ծավալը (ժամ)		
		ընդամենը	այդ թվում՝ դասախոսություն	գործնական պարապմունք
1.	Օպերացիոն համակարգ Windows XP, Windows 7, թղթապանակներ, ֆայլեր, պիտակներ (Folder, File, Shortcut) պատճենում, կտրում, տեղադրում, անվանափոխում (Copy, Cut, Paste, Rename) ղեկավարման վահանակ (Control Panel)	2	1	1
2.	Microsoft Office ծրագրային փաթեթ: MS Word ծրագրային փաթեթի տեխնիկական հնարավորությունները: Աշխատանք տեքստերի հետ (հավաքում, պատճենում, տեղադրում, ֆորմատավորում), աշխատանք աղյուսակների հետ (Tables), փաստաթղթի պահպանում, տպում (Save, Save As, Print)	2	1	1
3.	MS Excel ծրագրային փաթեթի տեխնիկական հնարավորությունները տվյալների բազայի հետ կատարվող աշխատանքներում: Բանաձևային գործողություններ և ներկայացման գրաֆիկական միջոցներ	4	1	3
4.	MS Excel ծրագրային փաթեթի տվյալների մշակման ֆիլտրացիոն միջոցները՝ ըստ թվային և բառային տիպի հայտանիշների, ցուցակներում ուղղումներ և առանձնացումներ	6	1	5
5.	Տեղեկատվության պաշտպանության հիմնական սկզբունքները: Համակարգչի և տեղեկատվության ծածկագրում, տեղեկատվության սեղմում և բացում: Հակավիրուսային ծրագրային փաթեթներ	1	1	-
6.	Տեղային ցանցի նշանակությունը, փոխադարձ կապի ապարատային և ծրագրային միջոցների նշանակությունն ու տեխնիկական հնարավորությունները	1	1	-
7.	Գլոբալ ցանց, համացանցային կապ, կապի ապահովման տեխնիկական ու ծրագրային միջոցներ (քարտեր և մոդեմներ): Որոնումը համացանցում, ծառայություններ, վտանգներ (Browsers - Internet Explorer, Opera)	2	1	1
8.	Էլփոստի հիմնական կիրառումները, համացանցային տեղեկատվության մշակումը, նամակների և ֆայլերի ուղարկումն ու ստացումը	2	1	1
9.	Տեքստային ֆայլի ավտոմատ գրառման միջոցներ (փաստաթղթի պատճենում, վերածում տեքստային ֆայլի և խմբագրում) FineReader և այլն	2	1	1
10.	Զեկույցների ներկայացման կազմակերպչական և տեխնիկական միջոցներ: MS PowerPoint ծրագրային փաթեթի տեխնիկական հնարավորությունները, գործիքները և մենյուն	1	1	-
11.	Թեստավորում	1	-	1
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	24	10	14

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	Չափման միավոր	Ընդհանուր քանակ	Միավորի գին (ՀՀ դրամ)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը՝ 2021թ., ըստ եռամսյակների, այդ թվում՝	
							3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ.
1	79631200/1	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Անձնակազմի կառավարում)**	ժամ	72	4,680	336,960	24	48
2	79631200/2	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Իրավագիտություն)**	ժամ	72	4,680	336,960	24	48
3	79631200/3	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Միջազգային հարաբերություններ)**	ժամ	48	4,680	224,640	24	24
4	79631200/4	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Տնտեսագիտություն)**	ժամ	48	4,680	224,640	24	24
5	79631200/5	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Համակարգչային հմտություններ)**	ժամ	72	4,680	336,960	24	48

Ծառայության մատուցումն իրականացվում է Կատարողի կողմից նախատեսված հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
ռեկտոր

Ա. ԼՈՌՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-6/2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	ընդհանուր գին (ՀՀ դրամ)	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ., ըստ ամիսների, այդ թվում՝				
				օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.
1	79631200/1	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Անձնակազմի կառավարում)**	336,960	112,320	112,320	336,960	336,960	336,960
2	79631200/2	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Իրավագիտություն)**	336,960	112,320	112,320	336,960	336,960	336,960
3	79631200/3	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Միջազգային հարաբերություններ)**	224,640	112,320	112,320	224,640	224,640	224,640
4	79631200/4	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Տնտեսագիտություն)**	224,640	112,320	112,320	224,640	224,640	224,640
5	79631200/5	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ **(Համակարգչային հմտություններ)**	336,960	112,320	112,320	336,960	336,960	336,960

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության [illegible]

_____ [illegible]

ԿԱՏԱՐՈՂ

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
ռեկտոր

_____ Ա. ԼՈՔԵՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-21-6/2-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
. . . . .	. . . . .
. . . . .	. . . . .
գտնվելու վայրը	գտնվելու վայրը . . . . .
հհ	հհ . . . . .
հվհհ	հվհհ . . . . .

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

. . . . . .

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «. . . .» «. . . . . .» 20 թ.
Պայմանագրի համարը՝ . . . . . .
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N . . . . հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
. . . . .	. . . . .
ստորագրություն	ստորագրություն
. . . . .	. . . . .
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-21-6/2-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ _____ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և -ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն